

ԻՍՐԱԵԼԻԱՅԻՔ ՅԱԻԵԼԵԱԼ ՌԻԺ ԿԸ ԿԵԴՐՈՆԱՅԵՆՆ **«ԿԱՊՈՅՏ ԳԻԾ» ԻՆ ՄՕՏ**

Ազգային լրատու գործակալությունը երեկ հաղորդեց, որ իսրայելական բանակը յաևելելու ուժ կեդրոնացուցած է «Կապոյտ Գիծ»-ին մօտ, յատկապէս սահմանագիծին արեւելեան հատուածին՝ Ժապալ Շէյխի, Մապարեի Շրպայալի, Բֆարշուպալի եւ Ապապիի շրջաններուն մէջ: Աւելի քան 40 հրասայլ եւ վրահամէքենայ զենդուած են Ժապալ Շէյխի, Ռուայսէթ Ալամի, Ռուայսէթ Սամաքալի, Մապարաթ Տաշքուլի, Մապարաթ Չրպոյնի եւ Ռամալի իսրայելեան դիրքերուն մէջ, ըսին նոյն աղբիւրները, աւելցնելով, որ այս նոր ուժերուն կողքին, իսրայելեան հրետանին համար 35 բեռնակառքեր զինամթերք ապահոված են:

«Այս բոլորին փոխարէն, կը շարունակուին սահմանագիծի փշաթել ցանկապատը ամբողջացնելու եւ դիրքերը ամրապնդելու աշխատանքները», ըսաւ Ազգային լրատու գործակալութիւնը:

ՎԱՌԵԼԱՆԻԹԻ ՆՈՐ ՍԱԿԱՅՈՅՑ

Բարիւղի նախարար Սիւլէյման Թրապուլսիի որոշումով երեկ սկսաւ վառելանիւթը վաճառուիլ հետեւեալ սակացոյցին հիմամբ.

- 98 օքթան պենզինի թիթեղը՝ 15,800 լ.ն. (+ 400 լ.ն.)
- 92 օքթան պենզինի թիթեղը՝ 15,400 լ.ն. (+ 400 լ.ն.)
- Առանց կապարի պենզինի թիթեղը՝ 15,700 լ.ն. (+ 400 լ.ն.)
- Բարիւղին թիթեղը՝ 10,400 լ.ն. (- 400 լ.ն.)
- Մապարեի թիթեղը՝ 10,100 լ.ն. (- 200 լ.ն.)

ՆՇԱՆԱԿԵԱԼ ՎԱՐՉԱՊԵՏ ՌԱՖԻՔ ՀԱՐԻՐԻ ՍԿՍԱԻ...

Շարունակուած Ա. ԷջԸ

հուրիւր վայելէ եւ կարենայ լուծել տնտեսական եւ ընկերային դժուարութիւնները:

Գերբի գլխաւորած «Գիւնարութիւն» եւ Բարգաւաճում» պլոքը Հարիրիի հետ ունեցած իր հանդիպումէն ետք յայտնեց, թէ պահանջած է շարունակել ապատեղումի ուղեգիծը՝ դիմագրաւելով իսրայելեան սպառնալիքները, պահպանելով Սուրիոյ հետ առանցքներու կապը, աշխատելով ապատարուած շրջաններու բարգաւաճումին համար, ինչպէս նաեւ՝ դուրս բերել երկիրը տնտեսական լծացումէն եւ ձեռնարկել պետութեան բարեկարգման արշաւի մը:

Հարիրիի գլխաւորած «Արժանապատուութիւն» պլոքին անունով երեսփոխան Պշարա Մըրհէժ ըսաւ, որ պահանջած են վտահուրիւնները չնոյ կառավարութիւն մը, որ ազգային համախոհութեան ոգիով կը համախմբէ խորհրդարանի բոլոր հոսանքները:

«Մեթնի Համախոհութիւն» պլոքը Հարիրիի հետ տեսակցելէ ետք, փոխ վարչապետ Միշէլ Մըր ըսաւ, որ տիրող տնտեսական եւ ընկերային պայմաններուն բերմամբ պլոքը նեցուկ պիտի կանգնի հանրապետութեան նախագահին եւ վարչապետին համաձայնութեամբ կազմուող որեւէ կառավարութեան, փրկելու համար տնտեսական եւ ընկերային կացութիւնները:

Մըր նաեւ յոյս յայտնեց, որ իր վարչապետ մաս կը կազմէ յաջորդ կառավարութեան, իսկ ինք պիտի շարունակէ իր խորհրդարանական եւ քաղաքական գործունէութիւնը:

կուշաբթի օր հանդիպում մը ունեցած էր Լիբնուտի ղեկավար Արիէլ Շարոնի հետ: Հանդիպումը թէեւ ճախողած էր, սակայն երկու ղեկավարներն ալ որոշեցին շարունակել տեսակցութիւնները: Պարաք հանդիպումներ կ'ունենայ նաեւ քաղաքական այլ ղեկավարներու հետ՝ վերահաստատելու համար Քնեսէթին մէջ կորսնցուցած իր մեծամասնութիւնը:

Կապալի եւ Այսր-յորդանանի մէջ բախումները շարունակուեցան: Երկուշաբթիէն Երեքշաբթի լուսոցող գիշերուան ընթացքին իսրայելեան բանակի ուղղաթիռները ուժարկոծեցին Պէյթ ժալա գիւղը, ուրկէ պաղեստինցի պինտայներ կրակ կը բանային Կիլօ հրէական բնակեցման վայրին դէմ:

Բախումները երեկ

Նոյն պլոքի անդամներ Երեսփոխան Սամի Խաթիպ եւ Ֆայսալ Տաուտ ներկայացուցին նոյն պահանջը:

«Հիւսիսի Համախմբում» պլոքի անդամներէն Երեսփոխան Ժիհադ Սամատ ըսաւ, որ պահանջած են, որ կառավարութիւնը դիմագրաւէ ապրուստի, տնտեսական եւ քաղաքական հարցերը, եւ անոր մէջ ներկայացուած ըլլաւ բոլոր շրջաններն ու քաղաքական ուժերը: Երեսփոխան Սալէի Խէյր շեշուր դրաւ պարկեշտ անձերու նշանակման վրայ:

«Թրիփոլիի Համախմբում» պլոքէն Երեսփոխան Մոհամէտ Սաֆատի մաղթեց, որ կառավարութիւնը կ'ունենայ ազգային եւ քաղաքական դիմագիծ:

«Արժանապատուութիւն» եւ Վերանորոգում» պլոքին անունով երեսփոխան Ժոքր Աֆրաճ ըսաւ, որ հանրային կարծիքը կը զգայ, թէ այս կառավարութիւնը արդէն կազմուած է: Ան նկատել տուաւ, որ ժողովուրդին կարեւոր մէկ հատուածին ներկայացուցչութիւնը արդար չէ եւ յոյս յայտնեց, որ այս դրութիւնը կը սրբազրուի:

Երեկ բազմաթիւ երեսփոխաններ, ինչպէս նաեւ Հարիրի անձամբ յայտնեցին անգամ մը եւս, որ կառավարութեան կազմուածութիւնը պիտի յայտարարուի Ուրբաթ օրը:

Երեկ բազմաթիւ երեսփոխաններ, ինչպէս նաեւ Հարիրի անձամբ յայտնեցին անգամ մը եւս, որ կառավարութեան կազմուածութիւնը պիտի յայտարարուի Ուրբաթ օրը:

al-mashrek
INSURANCE & REINSURANCE S.A.L.

Պորճ Համուտի մասնաճիւղի հեռաձայնի թիւերն են.

(01)258228 – (01)268808
Fax: (01) 258223

Շարունակուած Ա. ԷջԸ

տին հրապարակուած յայտարարութիւնը: Սպիտակ Տան բանբերը ըսաւ, որ այդ յայտարարութիւնը չ'օգնէր կացութեան մեղմացման եւ տագնապին լուծման: Բանբերը սակայն դիտել տուաւ, որ Ռաշինկթըն կը շարունակէ շեշտել կարեւորութիւնը Միշէլ Արեւելի մէջ խաղաղ լուծումի մը հաստատման: Ան կոչ ուղղեց իսրայելացիներուն եւ պաղեստինցիներուն՝ վերջ տալու բռնաբարումներուն, որոնք սկսած են Սեպտեմբեր 28ին. եւ վերսկսելու խաղաղութեան բանակցութիւններուն:

Միացեալ Նահանգները փորձեն համոզել երկու կողմերը, որ գործակցութեան դնեն Շարմէլ-շէյխի համաձայնութեան կէտերը: Պարաք եւ Արաֆաթ Շարմէլ-շէյխի մէջ համաձայնած էին վէճերը վար առնելու եւ բախումներուն վերջ տալու կոչ ուղղելու իսրայելացիներուն եւ պաղեստինցիներուն:

Միւս կողմէ, Չինաստան երեկ պարակցութիւն յայտնեց արաբական երկիրներուն, որոնք ընտրած էին տիպիկ:

Սակայն Չինաստան մտահոգութիւն յայտնեց բախումներուն մասին: Արաբի գործոց նախարարութեան բանբերը՝ Ժու Պանկյաօ յայտնեց նաեւ, որ Պէյճիւն կոչ կ'ուղղէ հակամարտ կողմերուն՝ վերադառնալու բանակցութիւններուն:

Ժու ըսաւ նաեւ, որ Նոյեմբեր 1էն 5 Պէյ-

Կ'ՈՒՉՈՒԻՆ

- Վարպետ աղաման-դաշարներ 5M հաստատութեան համար: Հեռ. 01-259265:

ԲԱԽՏԱԻՈՐՈՒԱԾ

Տեր եւ տիկին Սարգիս եւ Անի Բէօշկէրեան

բախտաւորուած են առջինէլ աղջիկ կաւակով մը՝

ՄԱՐԻ

23 Հոկտեմբեր 2000. Փարիզ

Lantern

- Վը ստանձնէ ուրախ առիթներու video
- կերպարանումներ
- Հեռ. 01-266866 եւ 03-695399

ԾԱԽՈՒ 3ԱՐԿԱԲԱԺԻՆ

- Նոր Սիւ, հեռ. 04-416823:

Ինչպէս պիտի այցելէ Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Իսմաթ Ապտէլ Մեկիտ, քննարկելու համար Միշէլ Արեւելի տագնապն ու արաբական աշխարհին եւ Չինաստանի երկկողմանի կապերը:

Նախագահ Պիլ Բլիթթըն եւ պաշտպանութեան նախարար Ուիլիըմ Քոնէն յայտարարած էին, որ ամերիկեան մարտանաւուն դէմ կատարուած գործողութեան պատասխանատուութեան նախատիժ պիտի չ'ունան:

Արաբի գործոց նախարարութիւնը կոչ ուղղած էր շրջանին մէջ գտնուող ամերիկացիներուն պզուշ ըլլալու: Նախարարութիւնը փակած է նաեւ շրջանի կարգ մը երկիրներուն մէջ գտնուող ամերիկեան դեսպանատները:

Ամերիկացիք ապահովութեան խիստ միջոցառումներու դիմած են նաեւ թրքական խառնուրդներուն մէջ, ուրկէ Երաքի դէմ թռիչքներ կը կատարեն ամերիկեան օդանաւերը:

Մեծամասնութեան ամերիկացի աշակերտութիւն ունեցող Պահլէյնի մէկ դպրոցը ժամանակաւոր կերպով փակուեցաւ. յայտնեց ամերիկեան

դեսպանատունը: (ՌՈՅԹԸՐԸ)

JUMBO TRAVEL
(ԳՆՏՈՅԵՄՆ ԵՂԱՐՔ)

- ՕԳԱՆԱՄԱՅԻՆ ՏՈՍՄԵՐ
- ԱՊՐԱՆՔԻ ՓՈՒՆԵՐՈՒԹԻՒՆ
- ԽՄԲԱՅԻՆ ՇՐՋԱՊՏՈՅՑՆԵՐ
- ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

Պորճ Համուտ, «Արմենիա» պողոտայ, Էտոյեան շէք, հեռ. 01-266408, 01-267753, Ել. 03-738232 FAX. 01-266408 ՊԵՅՐՈՒԹ ԼԻԲԱՆԱՆ

ՍԱՆԿԱՊԱՏՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (Բ. Ձեռնարկ)

ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ – ՀԱՐՑԱԳՐՈՒՄՆԵՐ

Գլխաւոր բանախօս ԳՈԿՏ. ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆ

Շաբաթ, 28 Հոկտեմբեր 2000, երեկոյեան ժամը 6:00ին, Հ. Ե. Ը. Պ. «Չապլին Մոմօստան» Կեդրոնի Անդրանիկ-Սեւան ակումբի սրահին մէջ, Հըրշ Թապալ:

Յետ ձեռնարկի տեղի պիտի ունենայ մանկապատանեկան գիրքերու ցուցահանդէս-վաճառք: Ցուցահանդէսը պիտի շարունակուի Կիրակի 29, Երկուշաբթի 30 եւ Երեքշաբթի 31 Հոկտեմբերին, առաւօտեան ժամը 10:00էն 2:00 եւ կէսօրէ ետք ժամը 5:00էն 8:00:

●ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

ՀՐԱԻԲ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

«ՀԱՅ ԴԱՏԸ՝ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ՄԵՉ»

Վերջերս լույս տեսավ Զ. Յ. Դ. Լիբանանյանի Հայ Դատի Մարմինի «Հայկական ուսումնասիրությունների» մատենաշարի 10րդ հատորը՝ «Հայ Դատի» Լիբանանյան մատենաշարի 11-րդ հատորը:



Հատորին հրատարակությունը, ինչպես նշում է Հայ Դատի Մարմինը, յառաջարկում է մեջ, կը գտնվի այս տարուան 11 Մայիսին լիբանանյան խորհրդարանին կողմից Հայկական Յեղասպանության ճանաչման և դատապարտման բանաձևերի միաձայնությունը:

Մինչ Հայկական Ուսումնասիրությունների հրատարակած միև ինը հատորները (անոնց մաս կը կազմէ նաև Հայ Դատի նուիրուած երեք խորհրդատուներուն ներկայացուած գեղոյցներուն առանձին հրատարակությունները) հանդիմանորէն կ'ուսումնասիրեն Հայ Դատը, այս գիրքը, իր կարգին, նոր լույս կը սփռէ Հայ Դատին վրայ՝ գանազան մեկնակէտերէ քննութեան առարկայ դարձնելով գայն:

Գիրքը կը բաղկանայ 21 յօդուածներէ և յօդուած-ուսումնասիրութիւններէ, որոնցմէ կարեւոր լատին մը Հայ Դատի Մարմինին նախաձեռնութեամբ լույս տեսած են լիբանանեան մամուլին և յատկապէս «Նամուր», «Տիար» և «Սաֆիր» թերթերուն մէջ՝ Հայկական Յեղասպանութեան 85րդ տարեկարծին նախորեակին և տարեկարծէն ետք: Վերոյիշեալ յօդուածները կը նպատակադրեն լիբանանեան հանրային կարծիքը կողմնորոշել ի նպաստ Հայ Դատին:

Գիրքին յօդուածները հրատարակուած են ժամանակագրական կարգով: Այսպէս, գիրքը կը սկսի 19րդ դարու 2րդ կիսուն Հայ Դատի քննարկումով, երբ Հայ Դատը կը կազմէր Արեւելեան Հարցին մէջ մասը:

Յաջորդ յօդուածը կ'անդրադառնայ Հայկական Յեղասպանութեան իրականութեան և պատճառներուն:

Ապա յաջորդող յօդուածներով լիբանանցի մտաւորականներ և համալսարանի դասախօսներ կ'անդրադառնան դատին ներկայ վիճակին և անոր դիմագրաւած մարտահրէճներուն քաղաքական վերլուծման:

Գիրքին մէջ մանրամասնորէն կ'ուսումնասիրուին թուրքեւիստայէլեան յարաբերութիւնները, նաև կը բացայայտուին թուրքեւիստայէլեան գործակցութեան համաձայնագիրներուն ետին գտնուող ծրագիրներն ու իւրաքանչիւրին հետապնդած շահը:

Յօդուածները կը վերլուծեն Հայ Դատին և Միջին Արեւելի տագնապին միջև գոյութիւն ունեցող կապը և կ'անդրադառնան Երուսաղէմի մէջ հայերու ներկայութեան և պատմութեան՝ հայ-արաբական պատմական յարաբերութիւններու ծիրին մէջ:

Կարգ մը յօդուածներ կը վերլուծեն նաև լիբանանեան քաղաքական կեանքին մէջ հայութեան մասնակցութեան, իսկ այլ գրութիւններ՝ արցախեան շարժումին իրադարձութիւնները:

Գիրքի յառաջարկներն մէջ Լիբանանի Հայ Դատի մարմինը շնորհակալութիւն կը յայտնէ լիբանանեան խորհրդարանի անդամներուն՝ Հայկական Յեղասպանութեան բանաձևերի ամրագրման համար, նշելով, որ այսպիսի կեցուածք մը նորութիւն չէր արգար դատուն իր աշխկցութեամբ ծանօթ լիբանանցի ժողովուրդին համար:

Այս ծիրէն ներս Զ. Յ. Դ. Լիբանանի Հայ Դատի մարմինը շնորհակալութիւն կը յայտնէ նաև բոլոր անոնց, որոնք ուղղակի կամ անուղղակի ձեւով նպատեցին Հայկական Յեղասպանութեան բանաձևեր ընդունման աշխատանքին, ինչպէս լիբանանեան թերթերու տնօրէններուն, սեփականատէրերուն և խմբագրական կազմերուն, որոնք Հայկական Յեղասպանութեան 85րդ տարեկարծին ամրագրման մէջ տրամադրեցին Հայ Դատի լուսարանման համար:

Տարակույս չկայ, որ լիբանանցի համալսարանի դասախօսներ և մտաւորականներ իրենց հիմնական դերակատարութիւնը ունեցան Հայ Դատի արծարծման մէջ: Այս յօդուածները կը ներկայացնեն որակական գնահատում մը Հայ Դատի ուսումնասիրութեան աշխատանքին մէջ՝ ակադեմական և գիտական մակարդակի վրայ:

ՕՒՔ ՅԱՎՈՐԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

28 Սեպտեմբեր 2000ին Հայաստանի պետական հեռատեսիլի թիւ մէկ կայանը կը սփռէր պետական եկամուտներու նախարարութեան յայտարարութիւնը, որ կը զրպարտէր Շէն կազմակերպութիւնը՝ հոգեմէտ դեղերու և թմրադեղերու մաքսանենցութեամբ: Յայտնենք նաև, որ ամիսներ ամբողջ նոյն նախարարութեան պաշտօնեաները ապարդիւնորէն կը ճշգնէին կազմակերպութեան գործելակերպին մէջ ապօրինութիւնները գտնել:

Սոյն զրպարտութիւնը գարմանալորէն կը գուգաղիլի Շէնի միջազգային կազմակերպութիւններու հետ գործակցութեան սերտացման և բարգաւաճման:

Շէն Մարդասիրական կազմակերպութիւնը, որ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան մարդասիրական օգնութեան կեդրոնական յանձնաժողովի որոշումով (Մ - 273) իրաւունք ստացած է ղեկորայք առաքելու և ցրուելու, Յուլիս և Սեպտեմբեր ամիսներուն Հայաստան առաքած էր երկու արկղ դեղորայք (22,5 թոն) և բժշկական պիտոյքներ (7,5 թոն):

Նախարարութիւնը իր զրպարտութիւնը կը հիմնէ ֆրանսական մարդասիրական կազմակերպութիւններուն նուիրած 22 թոն դեղորայքի և բժշկական պիտոյքներու ցուցակին վրայ սեղ չգտած նուազ քան 10 քիլո դեղերու գիւտով:

Խստորէն կը հերքենք հոգեմէտ դեղերու և թմրադեղերու մաքսանենցութեան որեւէ զրպարտութիւն: Ստուգելով դեղերը մաս կը կազմեն ֆրանսական դեղագանկի (pharmacie) թիւ 1 և 3 ցուցակին և հետեւեալներն են.

- Codethyline Honde - Stilnox
- Impramine - Imovane/zopicione
- Ivadal/zolidem - Haldol coperidol
- Calapressan/clomidine - Haldol

haloperido - Valium/diazepam - Zumaig/chlorhydrate de tramadol - Tramadol MERCK/chlorhydrate de tramadol - Contromal/chlorhydrate de tramadol - Topalgic / chlorhydrate de tramadol:

Կարելի չէ զրպարտել Շէնը մաքսանենցութեամբ, երբ 22,5 թոն դեղորայք, առողջապահութեան նախարարութեան և մարդասիրական օգնութեան կեդրոնական յանձնաժողովի համամտութեամբ, Շէն Հայաստանի և Արցախի Առողջապահութեան նախարարութեան կողմէ արդէն իսկ ցրար բաժնուած է Հայաստանի և Արցախի ցարդ օժանդակութենէ գուրկ 17 հիւանդանոցներու և դարմանատուներու:

Այս զրպարտութիւնը ոչ մէկ ժխտական հետեւանք կրնայ ունենալ Շէնի հեղինակութեան վրայ, սակայն կրնայ խախտել Հայաստանի պետութեան և պետական կառույցներու հանդէպ վստահութիւնը:

Պետական վարչութեան մը կողմէ առանց իրաւական քննարկման կիրարկուող ամբաստանութեան այս գործընթացը ցոյց կու տայ, եթէ տակաւին հարկ կայ, թէ Հայաստան որքան հետեւ է իրաւական պետութիւն մը ըլլալէ:

Յաւալի է, որ այս փոքր երկրին մէջ, ուր հարիւր հազարաւորներ արտագաղթի մէջ կը փնտռեն իրենց փրկութիւնը, «փութեանող պաշտօնեաներ», այլ ժամակակերէ եկող գործընկերակցով, անպատկանօրէն զրպարտեն կազմակերպութիւն մը, որ 13 տարի է ի վեր կը գործէ Հայաստանի վերաշինութեան և բնակչութեան կեանքի պայմաններու բարելաւման համար:

ՇԵՆ, ՖՐԱՆՍԱՅԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
Փարիզ, 5 Հոկտեմբեր 2000

Է. Յ. Դ. ԼԵՄԻ ՆԱԽԱԶՆՈՒԹԵԱՄ

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒՄ ՊՐԵՕՎԷԻ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՆԻՇԵՐ ԱՊԱՀՈՎԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ



Եւրո թեոպիսթ և Տիգրան Ճինգալեան Լեմմիի կը յանձնեն սրբանակը:

Կիրակի, 22 Հոկտեմբերին կէսօրէ ետք ժամը 4:30ին, յաջորդարար չորրորդ տարին ըլլալով տեղի ունեցաւ Է. Յ. Դ. Լիբանանի Երիտասարդական Միութեան կազմակերպած սրբանակաբաշխումի հանդիսութիւնը: Մրցանակ ստացան հայկական վարժարաններու պրեօվէի քննութեանց յաջողած այն աշակերտները, որոնք ապահոված են բարձրագոյն միջոցը:

Ձեռնարկ տեղի ունեցաւ Է. Յ. Դ. ԼԵՄԻ կեդրոնի «Վիգէն Ջաքարեան» սրահին մէջ: Ներկայ էին սեօրէններ, ուսուցիչներ, ծնողներ և աշակերտներ:

Բացման խօսքը կատարեց Ծովիկ Գալեմբերեան, որ արժեւորեց հայկական վարժարաններու՝ ազգային պատկանելիութեան գիտակցութիւնը ունեցող հայերու պատասխանութեան առաքելութիւնը: Ան յայտնեց, թէ այս ձեռնարկով ԼԵՄԻ կը փորձէ իր համեստ ներդրումը ունենալ ազգային ուսումնական կեանքին ներս՝ հոգալով պրեօվէի բարձրագոյն միջապահովող հայ աշակերտին յառաջիկայ տարեշրջանի կրթառնակը:

Ապա խօսք առաւ սրբանակին արժանացած աշակերտին յանձնարար Լեմմիին Գործառն Բոյրերու Սրբոց Հոփսիմեանց վարժարանի սեօրէնուհին քոյր թեոպիսթը, որ կոչ ուղղեց հայ աշակերտներուն, զան պահեցին իրենց հանցի պատկանելիութեան գիտակցութիւնը: «Հայ աշակերտը հոգեկան բարձրութեամբ ու մտային կարողութիւններով գինւած՝ պէտք է կարեւոր դեր ունենայ մարտահրաւերներուն եւ փաստել, որ չկայ սեղ ոչնչացրող ուժ մը», ըստաց:

Մրցանակաբաշխումը կատարեցին Տիգրան Ծինգալեան և քոյր թեոպիսթը: Հայկական վարժարաններու մէջ պրեօվէի քննութեան ամենէն բարձր միջ ապահոված աշակերտը՝ Համբիկ Բոյրի (Հոփսիմեանց Երկրորդական վարժարան) ստացաւ յաջողակ վարժարանի սեօրէնուհին քոյր թեոպիսթը: Ան միաժամանակ քոյր թեոպիսթի կողմէ պարգեւատրուեցաւ դարձակալ շքանշանով:

Նաև սրբանակ ստացան բարձր պատուոյ յիշատակութեան արժանացած տասնմէկ այլ աշակերտներ: Գարոյի Մկրտիչեան, Անի Բիրտեան, Պարս Գայալ, Բիրսթին Թովմանեան, Ստեփան Դանիելեան (Հոփսիմեանց երկր. վարժարան), Անուշ Գարապապեան (Ազգ. Լեւոն և Սոֆիա Յակոբեան քոլէճ), Միքայի Տէկիրմեցեան (Հայ Աւետարանական քոլէճ - քաղաք), Վարդուի Պետրոսեան, Սերուժ Չարխտեան (Հայ Աւետ. Փ. եւ Է. Թորոսեան Միջն. վարժարան), Էդուար Եղիայեան (Հասնագայիցի Մ. եւ Հ. Արսլանեան Ծեմարան) և Արփի Ապահանեան (Հայ Աւետ. Շամլեան - Թաթիկեան Միջն. վարժարան):

Նշենք, որ սրբանակի արժանացան միայն այն յառաջադէմ աշակերտները, որոնք իրենց երկրորդական ուսումը կը շարունակեն հայ վարժարանի մը մէջ:

Իսկ իրաքանչիւր վարժարանի մէջ ԼԵՄԻ կողմէ նուիրեց բաժնուցանուած նախնային աշակերտներուն, որոնք պրեօվէի քննութիւններուն յաջողած են պատուոյ յիշատակութեամբ:

Օրոտան պատգամը փոխանցեց Ուսումնական Խորհրդի ատենապետ Տիգրան Ծինգալեան, որ յայտնեց, թէ հայ աշակերտին համար ուշիւնութիւնը է յաւաքողուն ձգտումը անփոխարինելի արժեքներ պէտք է ըլլան: «Հոգիի եւ սրբի հարստութիւնն է անկորնչելի և սնունդը: Իսկ այդ ունենալու համար պէտք է գերազանց ճիշդ լծուիք աշխատանքի, որովհետեւ հայ աշակերտը կամ արհեստաւորը իրաւունք չունի միջակութիւն ըլլալու», ըստաց:

Մրցանակաբաշխումի աւարտին տեղի ունեցաւ հիւրապիրութիւնը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՇՄԱՆԱՍԵՐՉ ՍԱՌԵՈՒԼԻ ԶԵՋԱՆ

ԱՉՐՊԷՅՈՒՆՅԻՆԵՐ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՅԱՐԱԿ ՏԱՄԻՂ ԳԻՂԻ ՀՈՂԵՐԸ

«Հայոց Աշխարհ» թերթը կը հաղորդէ, թէ վերջերս լարուած վիճակ մը կը տիրէ Վրաստանի Մառնիկուլի շրջանի հայաբնակ Տամիա գիւղին մէջ, որ շրջապատուած է ազրպէյճանական բնակավայրերով:

Օգտուելով այն հանգամանքէն, որ Տամիա չունի իր առանձին վարչութիւնը, զրացի ազրպէյճանաբնակ Տամիա - Կէօվրախ գիւղի բնակիչները կաշառքի միջոցով տիրացած են հայ գիւղացիներու հողերուն և գանոնք զրկած են իրենց ապրուստի միակ միջոցէն:

«Հայոց Աշխարհ» կը յայտնէ նաև, որ Տամիա գիւղի բնակիչներուն դժգոհութիւնն ու բողոքը որեւէ արդիւնք չեն տար, որովհետեւ գիւղը վարչականօրէն կցուած է զրացի ազրպէյճանաբնակ բնակավայրերուն, իսկ հայերու հողերուն տիրացած ազրպէյճանացի վարձակալները չեն թաքցնել, որ իրենք կաշառքի միջոցով ձեռք դրած են Տամիայի հողերուն վրայ:

ԸՍՏ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

ԱՆՀԱՒԱՆԱԿԱՆ Է, ՈՐ ԱՅՍ ՏԱՐԻ ԲԱԽՈՒՄՆԵՐ ՎԵՐՍԿԱՄԻՆ

Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար զօրավար Սէյրան Օհանեան «Արարք» լրատու գործակալութեան յայտնած է, թէ ներկայիս Լեւոնային Ղարաբաղի տագնապը խաղաղութեան հանգրուանի մէջ կը գտնուի շնորհիւ ուժեղ և հասարակչութեան:

Ան յայտնած է, թէ ներկայիս Լեւոնային Ղարաբաղի բանակը ապագաբանութեանց է և ստորադաս է նախագահին և կառավարութեան: Իսկ Լեւոնային Ղարաբաղի տագնապին լուծման գծով նախարարը ըսած է, թէ անհանձնակալ է, որ այս տարուան ընթացքին որեւէ արդիւնք ձեռք բերուի: Ան նաև յայտնած է այն կարծիքը, թէ ներկայիս բախումներ չեն նախատեսուիր:

Զօր-Օհանեան ըսած է. «Լեւոնային Ղարաբաղի տագնապին առնչութեամբ պաշտպանութեան նախարարութեան և նախագահին միջև գոյուցուած է, որ լրանակին դերը և Լեւոնային Ղարաբաղի տագնապին լուծման մէջ անոր խաղաղացած դերակատարութիւնը կը կայանայ ազգային պահպանութեան հսկելու մէջ: Բանակը նաև նախագահին կարելիութիւն կու տայ երկրին շահերը պաշտպանելու:

Ճ. ՕՔԱՆԸՐ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԿ ԱՊԱՀՈՎԵԼ

20 Հոկտեմբերին Համալսարանային դրամատան կողմախ շրջանային տնօրէն Ճոնտի Օքանըրը Հայաստանի կառավարութեան Ընդունելութիւններուն Տան մէջ կայացած մամուլային ասուլիսին ընթացքին ըսաւ, թէ իրենք նուիրուած են Հայաստանի տնտեսութիւնը ոտքի կանգնեցնելու գործին և պէտք է սատարեն Հայաստանի կառավարութեան՝ Համալսարանային դրամատան խոստացած 300 - 350 միլիոն սուլարի վարկը Հայաստանի տրամադրելու համար:

Երկրին տնտեսութեան առջև ծագացած դժուարութիւններու յաղթահարման գլխաւոր պայմանը համարելով մաքրո - տնտեսական ցուցանիշներու միջնաէ կիսա պահպանութեանը՝ Համալսարանային դրամատան շրջանային ղեկավարը կը գտնէ, թէ Հայաստանի կառավարութեան այլ գործին մէջ զգալի օժանդակութիւն կրնայ ցուցաբերել երկրին հասարակութիւնը:

ԱՐԵՒԵԼԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ ԻՐ ՄԱՏԵՆԱՇԱՐԻՆ ՅՈՒՐԵՆԱԿԱՆ ՀԱՏՈՐԸ

Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայի արեւելագիտութեան հիմնարկի աշխատակազմին ջանքերով վերջերս լույս տեսած է «Մերձերկրային Միջին Արեւելքի երկիրներ և ժողովուրդներ» մատենաշարի 19րդ հատորը:

Հիմնարկը վերջերս սկսած է հրատարակել օտար լեզուներով աշխատութիւններ, որոնք կը տարածուին արտասահմանի մէջ:

ԱՐԵՒԵԼԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ ԻՐ ՄԱՏԵՆԱՇԱՐԻՆ ՅՈՒՐԵՆԱԿԱՆ ՀԱՏՈՐԸ

Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայի արեւելագիտութեան հիմնարկի աշխատակազմին ջանքերով վերջերս լույս տեսած է «Մերձերկրային Միջին Արեւելքի երկիրներ և ժողովուրդներ» մատենաշարի 19րդ հատորը:

ԿԱՐՕ ԳԷՈՐԳԵԱՆ

- Յօդուածի գլուխ ութ ոսկին շատ է, կ'առարկէր Հայկ Պալեան՝ թեւերը վեր եւ հանրեկեալի դէմքով, դիմացը նստած անձին, երբ մատնահարեցէ ետք դուռը մտայ «Ազգակ»ի խմբագրատունը:

- Եկ'որ, Գեղարդ եւ ծանօթացիր,- դարձաւ ինծի ժպտերես՝ «Ազգակ»ի տէրն ու տնօրէնը,- մեր լաւ ընկերն է, մտաւորական՝ Կարօ Գէորգեանը:

Հարձե գլուխը կ'ընդմ դարձուց Եգիպտոսէն նոր ժամանած «Յուսաբեր»ի օգնական խմբագիրը՝ խոժոռադէմ, «Ուրախ եմ»ով մը սեղմեց ձեռք արագ, ապա խօսքին ընդհատուած թեւը վերահաստատեց ընդփոյթով՝ Հայկ Պալեանին հետ:

- Շատ չէ՛, նոյնիսկ քիչ է, - մերկ սուրի պէս շաչեցուց Կարօ Գէորգեանը: Իսկ քու առաջարկած վեց ոսկիդ ինչի՛ կը բաւէ այս օրերուն:

Կարծր մարդ կ'երեւար նեղոսի ափերէն հասած գրիչի գինուորը, կեցուածքին մէջ՝ անյողողող, ձեռքի շարժումներով՝ յարձակապաշտ:

Առտուան այդ ժամուն, երբ արդէն առատ արեւ կար դուրսը, բելեկարակամը չէր վառեր Հայկ Պալեան (առանց խնայողական միջոցներու, ի՛նչպէս կ'ընար ոտքի պահել թերթը): Լույսը կու գար առաստաղին մօտ, Ուսթ - Ուսթ փողոցին վրայ լացուող լուսամուտէն (15 - 20 աստիճան սանդուղով կ'իջնէինք ստորերկրեան այդ տպարան - խմբագրատունը), ու կ'ստանուէին մէջ յստակ չէի տեսներ հիւրին դէմքը: Որոշ էր սակայն, որ սպիտակ չէի մորթը, դէմքը՝ ճմռթկուած, մազերը՝ կարճ ու արդէն հարկատու ճերմակին, դիմացինին կը նայէր ակնոցներուն վրայէն, բարկացուտ աչքերով:

Հայկ Պալեան շատ տեսած էր նման յարձակումներ, բարեկամէ թէ հակառակորդէ, եւ մնացած Սֆիդքսի պէս անշարժ, իր տեղը: Ու ձեւը գտած, ի վերջոյ՝ ի նպաստ իրեն լուծում մը գտնելու հարցերուն:

Արդէն վեցի տեղ վեցուկէս կու տար հիմա, մեծ գիշում մը ընդդի վեհանձնութեամբ:

- Ո՛չ, մի՛ երկնցներ, եօթուկէս տուր՝ սկսինք, կը պնդէր ապագայ աշխատակիցը:

Սակարկութիւնը դեռ կ'ընար երկա՛ր տեւել:

- Իրարմէ հեռու չէք,- համարձակեցայ միջամտել քաղցրահուն ձեւ մը մէկուռ, մէյ մըն ալ միւսին դառնալով, - եօթը լիւր: ոսկին յօդուածի գլուխ յարմար կ'ըլլայ երկուքով համար ալ:

Իրարու նայեցան հարցական. վէճը դադրած էր եւ համաձայնութիւնը՝ գոյացած:

- Լաւ, թող այդպէս ըլլայ,- հաստատեցին երկուքը միասին:

Ա՛լ երկար չմնաց Կ. Գէորգեան: Սեւ պայուսակը առաւ, ելաւ ոտքի, սեղմեց նախ շ. Պալեանին, ապա իմ ալ ձեռքը:

- Գործեր ունիմ, պէտք է մեկնիմ:

Ժամանուէս շատ գոհ չէր մնացած, բայց մեկնուածի պահուն աւելի մեղմ էր հետս, նոյնիսկ՝ բարեացակամ:

- Առիթ կ'ըլլայ, կը տեսնուինք տակաւին:

Եւ իրօք, սկսեցր պարբերաբար հանդիպլի իրարու, առաւելարար «Ազգակ»ի յարկին տակ: Միշտ նոյն մարդի՛ք, միեւնոյն դերաստուներ, - լարձրահասակ ու նիհարակնիզմ, սեւ պայուսակը թեւին տակ, ծխախոտը շուրթէն կախ, խօսքը կտորիկ եւ հատու: Ժամանումի եւ մեկնումի պահուն՝ զլխարկը գլխուն: Սեւ ու հաստ եզրերով ակնոցն ալ ազդեցիկ վայելչութիւն մը կու տար երկար ու ակօսաւոր դէմքին:

Օրաթերթին մէջն կ'գտած էր իր տեղը ունէր, իր սիւնակը, եւ շատ մը յոթեցողներ կը փնտնէին իր ստորագրութիւնը: Յօդուածները՝ ազգային, միջկուսակցական միջոցով, գաղափարական պայքարի առաջին գիծին վրայ, ոմանք «Ուղիղ ճակտին» յատկանշական ընդհանուր խորագրի տակ: Չէր ծանօթմբ բառերը, երբեմն իրիտ ըլլալու աստիճան: Եւ նետը կ'արձակէր թիրախին անխնայ ու անվարան: Աղմուկ կը հանէր մանաւանդ երեսփոխանական ընտրութիւններու ժամանակ, եւ սրամիտ «նուէր»ներով խնդուք կը տարածէր՝ Ամանորին:

Նախընտրած տիպարս չէր: Բայց իր յանդիսութիւնը, ուղիղ կեցուածքը եւ գողափարական անդիողութիւնը, կարճ ժամանակի ընթացքին, որոշ համարներ քան մը պարտադրեցին ինծի՛ մարդուն եւ անոր գրիչին հանդէպ:

Մեր բարեկամութիւնը ամրացաւ, երբ «Ազգակ»ի մէջ ուղղուեցի «Ամեկուն տարի գիրք»ի առաջին հատորը:

Կարելի՛ էր չխանայաճառուել տարեգլուխ տարեգլուխ կամուրջ նետել խոստացող այդ ձեռնարկով, որ հաւասարապէս օգտակար պիտի ըլլար ժողովուրդին ու մշակույթին: Վերջապէս գործ առաւ ինչի մը համար, որ կը ցուցաբերէր սակայն երկարաշունչ վազքի ախոյեանի մը կամքն ու կորովը:

Ա՛լ ժպտերես կը դիմաւորէր գիտ, կը խօսէր հետս սրտացօրէն՝ ամէն հարցի շուրջը: Մտերմացած էինք, իւրովի, ու դարձած նոյնիսկ՝ գործակից. կ'աշխատակցէի «Ամեկուն Տարեգիրք»ին, որ լոյս կը տեսնէր ամէն տարի՝ պահելով շահեկանութիւնը, ապահովելով հեղինակին հասոյթն ու համբուր:

Կ. Գէորգեան կը շարունակէր յօդուած տալ «Ազգակ»ին, մանաւանդ որ Հ. Պալեանն ալ աւելցուցած էր, քիչ մը, իր պատմագրիցը: Բայց այլեւս կ'ընար հանրահաստ ապրիլ առաւելարար իր հրատարակութիւններուն եկամուտով: Արդարեւ, «Ամեկուն Տարեգիրք»ը շուտով ունեցած էր բոյր եւ եղբայր՝ «Նյարգահան», «Ժամանց եւ Արտ»:

Հոգատարները Սփիւռքի չլորս ծագերուն ապրող իր բաժանորդներն էին: Եւ այն ժամանակները դիւրին էր եւ օժան՝ գիրք ու թերթի առաքումը: Ու ինք, միշտ մինակը, լաւապէս, կազմակերպած էր տարածման ցանցը:

Տնտեսագէտ հրատարակիչ էր, խղճամիտ ու տքնաշան խմբագիր նաեւ: Գրական հասկացողութիւնը սահմանափակ՝ բայց ամո՛ւր, ծանօթութիւնները ճորտ ու այլապէս:

Հիմա ստէպ կ'երթալի տունը, հըրեֆիէ: Դէմք մը, դէպք մը ողբկոչած ատեն դարակէն ծրար մը կը հանէր, ցոյց կու տար ձօնագրուած լուսանկար մը, նամակի մը հարագատ պատճէնը՝ իրրեւ փաստ: Աւելի շատ կը խօսէր ձեռագիրներու շուրջ, ինք յարարութիւնները նուազեցուցած ըլլալով առօրեային հետ՝ սեղեկութիւններ կը քաղար ինձմէ մշակութային եւ հասարակական կեանքի մասին:

Անգամ մըն ալ չսպասեց այցելութեան, հեռաձայնով կ'առաջարկէր:

- Դո՛ւն, գաղափարական մարդ, ի՛նչպէս թոյլ կու տաս պատմուածքիդ մէջ, որ հայ ուսուցիչը տեղի տայ, խեղճանայ առեւտրականին առջեւ... Ու կարդաց նա-

խաղասութիւնը՝ բարկացուտ շէտով:

Թիւրիմացութեան մէջ էր: Բացատրեցի:

- Այսպէս չի հասկցուիր, այդ պարագային փոխէ այդ երկու բառերը:

Առաջարկած փոփոխութիւնը արմատապէս չէր այլասերեր նախադասութեան միտքը: Գտանք «Յարմարագոյն բառերը», եւ խղճի անդորրութեամբ տպեց պատմուածքս («Ուսուցանը») տարեգիրքին մէջ:

Կանոնապահութիւն կը պարտադրէր պատուակալ աշխատակիցին հարկ էր, որ ան յարգէր խոսուածը, աւարտած ըլլար ստանձնած աշխատանքը՝ օրին ու ժամին:

Խնդրած էր, մետասաներոյ ժամու, որ յուշ-կենդանագիր մը պատրաստեմ Բարսեղ Կանաչեանի մասին, միշտ տարեգիրքին համար:

Նեղը դրի եւ գիտ, նշանակած թուականին աւարտեցի գրութիւնը: Բայց իրեն յանձնելիք օրս առողջութեամբ լաւ չէի: Այսուհանդերձ, ծանօթ իր բնաւորութեան, երեկոյեան քչեցի ինքնաշարժս եւ ի վերջոյ հասայ իր տունը:

Դուռը բացաւ ուրախութեամբ եւ առաջնորդեց զիս ներս գրասենեակը: Իսկոյն առաւ ձեռագիրս եւ սկսաւ կարդալ հափափանքով:

- Սօտեցիր, հանգիստ, նստէ բազկաթոռին գիրկը, մի՛ աճապարհեր:

Բայց նշմարելով, որ վարանելէ ետք սեղանը, բռնած եւ կէս մը նստած էի աթոռին ծայրը, գլուխը վեր առաւ թուղթէն, սուր նայեցաւ ինծի ակնոցներուն վրայէն եւ բժիշկի մը վճռապատկեցեամբ՝

- Ի՛նչ է, հիւսանդ ես, ծո՛ւռ կը նստիս, թէ ոչ՝ թուղթէ կը տառապիս...

Գուշակութիւնը ճիշդ էր, եւ հաստատական էր տուած նշանս:

- Չըլլալիք լաւ,- ավի զարկաւ ծոնկին,- դժուար էր է, իմ ալ գլխէս անցած է: Բայց ի՛նչպէս կ'ըցար կառքը քըւ ու գալ: Շնորհակալ եմ շատ եւ հիմա կը հասկնամ անապարհաբա՛ղ: Վայրկեան առաջ մեկնէ, գնատուն, հանգստացիր:

Շնորհակալութիւնը կրկնեց դուռէն ելած պահուս, եւ կարծես ինքզինք յանցապարտ զգալով խստարորոյթութեամբ համար՝

- Ճշդապահութիւնը արժանիք է, բայց սովորական կեանքի մէջ պէտք է գուրդուրալ, ամէն լաւն առաջ, առողջութեան վրայ,- ձայնեց ետեւէս՝ զղջումին հիւսելով քաւութեան լորդորը:

- Ի՛նչպէս եղար,- հեռախօսեց յաջորդ առաւօտ սրտախուճը:

- Լաւ իմ, շատ լաւ, եւ հիմա պիտի երթամ դործի: Ծուռ մարդ կը թուէր, առաջին հերթին: Բայց սիրած անձերու հանդէպ սիրտը կը մնար փխրուն, կարծր կուրծքին տակ:

- Չա՛, աղէ՛կ, միտքս հանգստացաւ: Գրութիւնը լաւ էր, ուզածս: Այսօր կը դրկեմ տպարան:

Կը շարունակէր հանրային մարդու եւ կուսակցական իր կեանքը, կը պահէր տեղը մամուլին մէջ եւ բնախօսներու շարքին (Մայիս 28, Հ. Յ. Դ. օր): Բայց այլեւս «Ունայնութեան փոս»ի լիցը գլխաւորաբար իր հրատարակութիւններն էին,- հաստափոր այլ ժողովրդաշահճոյ հատորներ, որոնք կ'աւելցնէին նաեւ իր եկամուտը:

Ասոնց շարքին առանձնաշատուկ տեղ ունէր երգարանը: Ինք երաժիշտ չէր, անշուշտ, գուրկ էր երգելու եւ նուազելու շնորհէն ալ, բայց քաղածանօթ էր հայ երգչին, եւ ձեռքին տակ ունէր վաւերական ձայնագրեր երգերու մեծամասնութեան: Քանի մը հատ հարեանասիրական (հաւանաբար Պալքաններու արգասիք) բնագիր ձայնագիր չունէին,- բայց ինք գոց գիտէր անոնց բառերն ու եղանակը, եւ կ'ուզէր գանոնք անպայման մտցնել իր երգարանին մէջ:

- Հայրդ չի կրնար օգնել ինծի այս գործին մէջ,- հարց տուաւ ինծի,- հին երաժշտագէտ է, աստիկականին երգի պատասխանատուն:

Հայրս, իրօք, պետական ուստիկայանին մէջ երաժշտագէտ - յօրինողի պաշտօնին զուգահեռ, տեղացի երգիչ-երգահեղիններու երգերը կը նօթագրէր յաճախ՝ ձայնասփիւռի յայտագիրներուն համար: Երբեմն ալ այլ արուեստագէտները նօթագրութեան արուեստին անծանօթ,- մեր տունը կու գային ու ծուռ կամ Հիտակ կ'երգէին, խնդրելով, որ իրենք խեղապատկիչն ծնած այդ եղանակները հայրս կարգի՛ր ղեկը թուղթի վրայ: ապա այդ յղացումը կը դապնար իրենց յօրինումը, արար աշխարհէն կը ճանչցուէր իրրեւ իրենց անձնական ստեղծագործութիւնները:

Հայրս յօժար կ'ըլլար արուեստակցական նման օժանդակութիւններու: Բայց կը դժուարանար գանձել վարձքը այդ աշխատանքին, արուեստը դրամով վաճառելը յանցապարտութիւն կը նկատէր իր ազնուական հոգին: Այսուհանդերձ, երեսը միւս կողմը կը դարձնէր, երբ պնդէին ու պատուագին մը սպրդեցնէին սեղանի ծածկոցին տակ:

Ա՛լ ինչո՛ւ եւ ի՛նչպէս մերժէր բարեկամական այդ վերաբերումը հայ գրագէտի մը:

Եւ Կ. Գէորգեան ալ եկաւ մեր տունը՝ թուղթերով լեցուն սեւ պայուսակը թեւին տակ. հօրս հետ առանձնացաւ քովի սենեակը: Ինք կ'երգէր իր գիտցածը, հայրս կը միջամտէր ու կը սրբազրէր՝ իր ձայնով: Երբեմն կը վիճէին՝ «Չէ, պարպէս չէք», «ոչ, յայպէս միայն կ'ընայ ըլլալ»:

Չօրս ձայնը սրտագրաւ չէր. բայց Կ. Գէորգեան «ականջ ալ չունէր», երբեմն մորթուող աքլորի ճիչեր կը թռչէին կողմերէն: Եւ ի լուր այս բաղաձայն պատարագին՝ մենք դուրսը դժուար կը զսպէինք մեր խնդուքը: Բայց կը սորվէինք նաեւ մեզի անձանօթ հայերէն քաղցր երգեր:

Յաջորդ գալուս ինք եւ հայրս կրկին երգեցին փոխն ի փոխ, եւ վերջնական նօթագրութիւնները ապահովածս Կ. Գէորգեան մեկնեցաւ յաղթական: Այդ երգարանէն լաթեկազմ հատոր մը նուիրեց հօրս՝ յատուկ ձօնագրութեամբ, ինչպէս կ'ընէր տարեգիրքը ինծի, երբ մէջը գրութիւն ունեանայի (այլապէս պէտք է գոհանայի պարզ ընթացքովն սահմանուած թղթակազմ օրինակով...):

Այնուհետեւ մեր բարեկամութիւնը շարունակուեցաւ աւելի քան առաջ. բայց իր կեանքի կանաչ տարիները չտեսեցին երկար: Տկարայնութիւն մը եկաւ վրան, հիւսանդութեան տէր եղաւ, եւ հետզհետէ ոտքը կտրեց Հրապարակէն, քաղցուեցաւ տան շրջոյ պատի ետին:

3. ԳԵՂԱՐԳ

(Շար. 1)

ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻՆ ՆՈՒՒՐՈՒԱԾ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

